

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Դիլիջան
Մասնակցում էին

15 դեկտեմբերի 2016թ.
Ժամը 11⁰⁰

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ֆրանգուլյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական բաժնի պետ

Լ. Դանիելյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստապետ-պարետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ

1. **«ԴԱՊ-ՊԸԱՊՁԲ-16/22» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նիստի.**

(Հ. Հարությունյան)

Հաշվի առնելով «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից անօդաչու ինքնաթիռի ձեռքբերման համար հայտարարված «ԴԱՊ-ՊԸԱՊՁԲ-16/22» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 12.12.2016թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ինստիգեյթ Ռոբոտիքս» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետով սահմանված ժամետում ՀՀ ՖՆ ՏՏԵՆՁ վարչությունից 14.12.2016թ. դրական եզրակացություն է ստացվել: Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետի, «Ինստիգեյթ Ռոբոտիքս» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

2.1 «Ինստիգեյթ Ռոբոտիքս» ՓԲԸ-ին հաղթող ճանաչել և ընկերությանը ներկայացնել «Անօդաչու ինքնաթիռի մատակարարման գնման» պայմանագրի կնքման առաջարկ:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը անգործության ժամկետ չի սահմանավում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. **Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան



Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ֆրանգուլյան



Լ. Դանիելյան



Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան

